

ՊԼՄՄՈՒԹԻՒՆ ՍԸՍԸՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆԸՕԼԴԷԶԸԻ.

(Շարունակութիւն)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԼՄՄԱԿԱՆ

\* \*

Հեզիկ կարկաշով վագում են ալիք,  
Փարում փայփայում ափերը կանաչ.  
Ջրերի վերայ կախուած ուտնիք  
Նոցա հետ խօսում են լալահառաշ:

«Մի վագէք, ալիք, կացէք, կոհակներ.  
Մի թողնէք չքնաղ այս վայրն հանգստեան  
Եւ վայելէցէք քաղցրութեան ժամեր,  
Մինչ ժպտում է ձեզ շողն արեգական:

«Ախ, դուք չէք տեսնում կանցնէք այս քրուր —  
Եւ կը պղտորի ձեր ջուրը վճիտ.  
Այնտեղ այլ երկեր, այլ ափեր տխուր,  
Այնտեղ կը գրկէ ձեզ արեան հովիտ:

«Այնտեղ հողն արիւն, արիւն են սարեր,  
Ջինջ աղբիւրներն էլ կտրել են արիւն.  
Վտակը քերում արիւնտ քարեր,  
Թառամեցնում է ծաղկավառ գարուն:

«Սոսկում է երկինք սրի շաչինից,  
Մթնել են ոսկի ալեւի շողեր.  
Ո՛հ, մի հեռանայ, սիրուն գետ, մեզնից,  
Մի վագէք, ալիք, կացէք, կոհակներ ...»

Բայց ... մոայլեցաւ երեսը գետին.  
«Իմ քոյր, եղբայրն են այն ալն ու վտակ —  
Գոչեց, զարկուեցաւ սարսաժ ափերին  
Ու յառաջ անցաւ կոհակ առ կոհակ:

Թ. ՅՈՂԱՆՆՍԻԱՆ.



Շապուհ Բ., որին յետագայ աւանդու-  
թիւնն իրաւացի կելլիւ իրրե զօրաւոր թագաւոր է  
զրուատում մեռաւ 379 թ. ամառուան վերջին,  
Նրան յաջորդեց իւր եղբայր Արտաշիր Բ., Թերեւս  
այս ճերուճու գահ բարձրանալու համար ևս այնպիսի  
պատճառներ կային, ինչպիսի պատճառներով մի ժա-  
մանակ Շապուհ կաթնիկեր մանուկը թագաւոր պը-  
սակուեցաւ: Իրրե արքայազն կուսակալ Ադիարենէի  
(հին Ասորեստանի մի բաժնի) Արտաշիրն (արդէն  
344-ին և զեռ 376-ին) մեծապէս մամակեցել էր  
քրիստոնէութիւնը ճնշելու գործին: Սակայն սրա  
գահ ամբառնալուց յետոյ քրիստոնէից հալածանքը  
դադարեց. գուցէ որոշ զիտմամբ և կամ թերեւս  
խիկ սովորական արեւելեան ճուլութեան պատճառով:

Նոյն իսկ մայրաքաղաքում կարող էր կրկին  
մի եպիսկոպոս նստել: Երբ սակայն Արտաշիրը մե-  
ծամեծների հետ սկսաւ բռնութեամբ վարուիլ և  
նրանցից մի քանիսին սպանեց, այն ժամանակ մեծա-  
մեծները նրան գահալէժ թրին (383-ին կամ 384-ին):

Սրա յաջորդը Շապուհ Գ., Շապուհ Բ.-ի որ-  
դին, գահ բարձրանալուն պէս զեպպաններ ուղար-  
կեց Ա. Պոլիս ուր նրանք մի հաստատուն խաղա-  
ղութեան գաշն կուեցին (384): Սա կարճ ժամանակ  
թագաւորեց, որովհետեւ արդէն 388 կամ 389-ին  
մեծամեծներից սպանուեցաւ:

Սրա յաջորդը և որդին (թերեւս եղբայրը)  
Բաճրամ (1) Գ., որի մականունն է Կրմանշահ, «Կըր-  
մանի թագաւոր», որովհետեւ իրրե գահաժառանգ  
Կրմանի կառավարիչ էր եղել, հառվայեցուց հետ  
բարեկամութիւն պահպանեց և քրիստոնէակաների հետ  
գթասրտութեամբ վարուեց, Հոռվեացիք եւ պարսիկնե-  
րը 290-ին բաժանեցին իրենց մէջ Հայաստանն այնպէս, որ  
մեծազոյն բաժինը պարսկական եւ փոքրագոյնը յունական  
հարկատու տէրութիւններ դարձան: Այս բաժանումից յե-  
տոյ ղեռ շատ շիոթութիւններ են տեղի ունեցել, սակայն  
բաժանումն տեսել է միջեւ արաբական ժամանակը:  
Բահրամ Գ. ևս բռնի մահով է մեռել, ինչպէս  
աւանդութիւնն ասում է «չարագործները» նրան նե-  
տահար սպանեցին (ամառը 399-ին):

Սրա յաջորդը Յազնգըտ (Iezdegerd = Եզդիգեբրդ)  
Ա. որդի Շապուհ Բ.-ի կամ Շապուհ Գ.-ի, թը-  
ուում է թէ արդէն Բահրամ Գ.-ի ժամանակ թա-  
գաժառանգ պէտք է նշանակուած լինէր կամ թէ

\* Տես Արարատ. համար 9. եր. 550—555:

1. Տես Ղ. Փարսեցի Դր. Ա. ԺԲ. եր. 49. Յետ այ-  
տղիկ մեռաւ Շապուհ արքայ պարսից, եւ թագաւորեաց  
Վրամ որդի նորա որ էր Կրման արքայ: